«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը:

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Դավթյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Դաշտավանի Գ.Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն	3
Առակների նպատակը	5
Աստվածաշնչյան առակներ	6
Եզրակացություն	20
Օգտագործված գրականության ցանկ	21

Ներածություն

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակն է գիտելիքների պահպանումն ու նոր սերունդներին փոխանցումը: Մեր հայրենիքի մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները:Այս տեսանկյունից Աստվածաշնչյան առակները առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել դպրոցականների հուզաշխարհի վրա:Առանձնահատուկ դեր ունեն առակները, ինչպես նաև Աստվածաշնչյան առակները, որոնց միջոցով երեխաների մեջ կարող են դաստիարակվել բարություն, ազնվություն, աշխատասիրություն, պարտաճանաչություն,արդարամտություն,ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն: Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով:Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Հենց դա է պատճառը, որ դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին: Անընդհատ մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:Առակների դասավանդումը դասարաններում երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները: Առակների միջոցով զարգանում է նաև աշակերտների ընթերցասիրությունը: Դասագրքերում ընդգրկված հայ և այլազգի առակագիրների ստեղծագործություններն,Աստվածաշնչյան առակները իրենց պարզ ու մատչելի գրելաոճով միշտ էլ սիրելի ու հետաքրքիր են երեխաների համար: Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա, թե ինչու այսօրվա սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

X դասարանում <<Հասարակագիտություն>> առարկան անցնելիս ևս կիրառելի են Աստվածաշնչյան առակները,քանի որ <<Բարոյագիտություն>> բաժինը ուսուցանելիս շատ ավելի մատչելի է դասերը սովորեցնել և հասանելի դարձնել աշակերտներին Աստվածաշնչյան առակների միջոցով:<<Բարին և չարը>> դասի մեջ

կիրառում ենք <<Սերմնացանի առակը>>,իսկ Խրախուսում և պատիժ դասի մեջ՝<<Մշակների առակը>>:Խրախուսման մասին սովորեցնելու ավելի լավ օրինակ անհնարին է պատկերացնել:Բայց կարևոր է նաև այն հանգամանքը,որ այս առակը ընթերցելիս,աշակերտների մոտ զարգանում է նաև քննադատական մտածելակերպը և բանավիճելու կարողությունը:Աշակերտները բանավիճում են և գրեթե միշտ տարբեր կարծիքներ են ունենում հավասար խրախուսման վերաբերյալ:Բարոյական արժեքները պետք է մեր համար լինեն կենսակերպ,մենք ինքներս՝ուսուցիչներս, պետք է լինենք բարոյական արժեքների կրողներ,որպեսզի կարողանանքսովորեցնել մեր երեխաներին:Թեման միշտ արդիական է,քանզի բարոյական արժեքները,որ խրատվում են

Այսպիսով ,այս հետազոտական աշխատանքի նպատակն է ունենալ Աստվածաշնչյան բարոյական արժեքներով դաստիարակված, բարոյական արժեհամակարգի կրող աշակերտ, մարդ:

Առակների նպատակը

Ապա աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին.
— Ինչո՞ւ ես առակներով խոսում նրանց հետ:
Հիսուսը պատասխանեց նրանց.
— Դո՜ւք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց ո՜չ նրանք. որովհետև ով ունի, նրան պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցած փոքր բաժինն էլ: Դրա համար է, որ ես առակներով եմ խոսում նրանց հետ, որովհետև նայում են, բայց չեն տեսնում, ականջ են դնում, բայց չեն լսում ու չեն հասկանում: Այսպես է իրականանում նրանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է.
«Անդադար կլսեն, բայց չեն հասկանա,
շարունակ կնայեն, բայց չեն տեսնի,
որովհետև այս ժողովրդի միտքը թանձրացել է.
նրանք խցել են իրենց ականջները
և փակել են իրենց աչքերը,
որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն, և ականջները լսեն,
մտքերը հասկանան ու դարձի գան, և ես բժշկեմ նրանց»:
Բայց երանի՛ ձեր աչքերին, որովհետև տեսնում են, և երանի՛ ձեր ականջներին, որովհետև լսում են: Ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ և արդարներ փափագեցին տեսնել ձեր տեսածները, բայց չտեսան, և ցանկացան լսել ձեր լսածները, բայց չլսեցին:

Ուշագրավ է, որ Աստծու ներշնչմամբ գրված այդ խոսքերը սաղմոսերգուն ասել էր Հիսուսի ծնվելուց դարեր առաջ: Ստացվում է, որ իր Որդու երկիր գալուց դեռ հարյուրավոր տարիներ առաջ Աստված որոշել էր, որ նա ուսուցանելու է առակների միջոցով: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Աստված գնահատում է ուսուցանելու այս մեթոդը:

Հիսուսը այնպես է սովորեցնում, որ նրանց համար հեշտ լինի հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝ մղելով

նրանց լսելու: Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ:

Աստվածաշնչյան առակներ



Որոմի առակը

Հիսուսը մի ուրիշ առակ էլ պատմեց նրանց և ասաց.
– Մի մարդ լավ սերմեր սերմանեց իր արտի մեջ: Մի գիշեր, երբ ամեն մարդ քնի մեջ էր, նրա թշնամին եկավ, որոմ ցանեց ցորենի մեջ և գնաց: Երբ սերմերն աճեցին և սկսեցին հասկ դառնալ, այն ժամանակ երևաց և այդ որոմը: Տանտիրոջ ծառաները եկան և ասացին նրան. «Տե՜ր, մի՞թե դու քո արտի մեջ միայն լավ սերմեր չսերմանեցիր. հապա որտեղի՞ց է այդ որոմը»: Տերը պատասխանեց. «Թշնամի մարդու արած գործ է դա»: Ծառաներն ասացին. «Ուզո՞ւմ ես, որ գնանք և քաղհանենք որոմը»: «Ո՜չ,-պատասխանեց Տերը,-որպեսզի չլինի թե որոմը քաղելիս ցորենն էլ միասին արմատախիլ անեք: Թողե՜ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հնձի ժամանակը. ես այն ժամանակ հնձողներին կասեմ՝ նախ որո՜մը քաղեցեք, խրձե՜ր կազմեցեք այրելու համար և ապա միայն քաղեցե՜ք ցորենը և ամբարեցե՜ք իմ շտեմարաններում»:

Ագարակատերը Հիսուսն է , իսկ ագարակը՝ աշխարհը: Ցորենի սերմերը՝ բարի, իսկ որոմի սերմերը չար մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է,
որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:

Իմ կարծիքով այս առակը ասում է, որ պետք է ունենալ համբերություն և գործի ընդհացքում խոչընդոտները չվերացնել, քանի որ երբեք չես կարող իմանալ, թե ինչ արդյունք կունենա այդ գործի ավարտը: Նաև պետք է փորձես աչք փակել որոշ բաների վրա, իսկ հետո այդ ամենը ինքստինքյան կվերանա:

Այրի կնոջ և դատավորի առակը

Հիսուսը մի առակ պատմեց իր աշակերտներին՝ ցույց տալու համար, թե պետք է միշտ աղոթել առանց վհատվելու: Եվ ասաց.
-Մի քաղաքում մի դատավոր կար, որ ո՛չ Աստծուց էր վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում: Նույն քաղաքում մի այրի կին էլ կար, որ դիմում էր նրան և խնդրում. «Իրավունքս պաշտպանի՛ր իմ հակառակորդից»: Դատավորը երկար ժամանակ մերժում էր դատը տեսնել, սակայն ի վերջո ինքն իրեն ասաց. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, 5 բայց քանի որ այս այրին նեղություն է տալիս ինձ, նրա դատը տեսնեմ, որպեսզի անվերջ մոտս գալով՝ չանհանգստացնի ինձ»:
Ապա Տերը շարունակեց.
-Լսեցե՛ք, թե ի՛նչ է ասում այդ անիրավ դատավորը: Իսկ Աստված ինչքա՞ն կհամբերի իր ընտրյալների կրած անիրավությանը. չի՞ պաշտպանի նրանց, որոնք գիշեր ու ցերեկ դիմում են իրեն: Այո՛, ասում եմ ձեզ, նրանց իրավունքն իսկույն կպաշտպանի: Բայց Մարդու Որդին երբ գա, արդյոք հավատ կգտնի՞ երկրի վրա:

Առակը սովերեցնում է , որ անդադար ու անձանձրույթ պետք է աղոթել Աստծուն,ով անտարակույս կլսի իրեն դիմողի աղոթքների ու աղաչանքները, այլ ոչ թե անիրավ և անաստված դատավորին , ով լսեց այրի կնոջը միայն նրա համար, որ վերջինս արդեն ձանձրացնում էր իրեն:

Այրին Քրիստոսին թողած՝ ապավինում էր անիրավ դատավորին՝իրավունք էր խնդրում մեկ այլ դևից, որպեսզի ձերբազատվի մեկ այլ անիրավի բռնությունից:

Անիրավ տնտեսի առակը

«Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ. և նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը: Տերը կանչեց նրան և ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին, տո՜ւր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս տնտես լինել չես կարող»: Տնտեսը իր մտքում ասաց. «Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. հողի վրայ աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի, երբ տնտեսությունիցս հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները»: Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է՝ «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է՝ «Հարյուր տակառիկ ձեթ». և տնտեսը նրան ասում է՝ «Ա՜ռ քո մուրհակը և նստի՜ր ու անմիջապես գրի՜ր՝ հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասում է՝ «Դու ինչքա՞ն պարտք ունես», և սա ասաց՝ «Հինգ հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց՝ «Ա՜ռ քո մուրհակը և նստի՜ր ու գրի՜ր՝ չորս հարյուր»: Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ: Եվ Ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ»:



Տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի:Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր: Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում

երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու ղզջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Ժայռի վրա կառուցել տունը

Ով որ ինձ մոտ է գալիս և իմ խոսքերը լսելով՝ գործադրում է դրանք, ձեզ ասեմ, թե նա ում է նման: Նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում և հիմքը հաստատում ժայռի վրա: Երբ գետը, հեղեղներից հորդելով, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն. որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: Իսկ ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է կառուցում. երբ գետը զարկում է դրան, այն իսկույն քանդվում է: Եվ ի՜նչ ահավոր է լինում այդ տան կործանումը:



Ժայռը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է, իսկ ավազը՝ այս աշխարհը: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի վրա, ինչ-որ կառուցել ես, վաղ թե ուշ փլվելու է:

Մենք պետք է իմաստուն լինենք, եւ մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, այսինքն՝ ապրենք Նրա Խոսքի համաձայն: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն եւ դժվարություն չի կարող մեզ կործանել:

Պետք է Խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող:

Հավատի լույսը

Ոչ ոք ճրագը վառելուց հետո այն չի թաքցնի, կամ կաթսայի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն: Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Ուրեմն զգո՛ւյշ եղիր, որ չլինի թե քո մեջ եղած լույսը խավարի: Եթե քո ամբողջ մարմինը լուսավոր է, առանց խավարի մի մասնիկ ունենալու իր մեջ, այն ժամանակ ամեն ինչ այնպես լուսավոր կլինի, ինչպես երբ ճրագն իր շողերով լուսավորի քեզ:

Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել , որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: *Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի*: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում է հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որն շատ անգամ խափուսիկ է:

Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում

Նմանապես, ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի, այլապես տիկերը կպայթեն. գինին դուրս կթափվի, և տիկերը կփչանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում, և երկուսն էլ պահվում են:

Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած տիկերի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր գինու: Հնի հետ դրանք անհարիր են, պետք է նոր գինին նոր տիկի մեջ լցնել, Նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Սերմնացանի առակը

Եվ նա առակներով շատ բաներ էր սովորեցնում նրանց և ասում.
— Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Երբ նա սերմանում էր, հատիկների մի մասն ընկավ ճանապարհի եզերքին, և թռչունները եկան ու կերան դրանք: 5 Ուրիշ հատիկներ ընկան ժայռոտ մի տեղ, ուր շատ հող չկար, և որովհետև հողը խորություն չուներ, իսկույն բուսան. բայց երբ արևը ելավ, խանձվեցին, և քանի որ արմատ չունեին, չորացան: Ուրիշ հատիկներ ընկան փշերի մեջ, և փշերը բարձրացան ու խեղդեցին դրանք:Իսկ ուրիշներն ընկան լավ հողի մեջ և պտուղ տվեցին. մի մասը՝ մեկի տեղ հարյուր, ուրիշները՝ վաթսուն և կամ երեսուն:Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Սերմնացանը Քրիստոս է, սերմը՝ Աստծո խոսքը, որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը՝ ողջ մարդկությունն է, Աստծո խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում: Բոլորն էլ, երբ լսում կամ ընթերցում են Աստծո խոսքը, ստանում են սուրբ սերմերի իրենց բաժինը, բայց թե դրանք ինչպե՞ս կաճեն՝ պայմանավորված է մարդու հոգևոր մակարդակից: Առակում խոսքը 4 տիպի մարդկանց մասին է:

Առաջին տիպի մարդիկ դրանք այն մարդիկ են, որոնց միտքը կարծր հողի նման չոր է: Երբ կարդում կամ լսում են Տիրոջ խոսքը անտարբերության արտաքին շերտը չի թողնում, որ հոգևոր սերմը թափանցի սրտի մեջ, և այն մնում է հիշողության մակերեսին և չար ուժերը՝ աշխարհի զվարճանքներն ու գայթակղությունները, թռչունների նման մարդկանցից հափշտակում են Տիրոջ խոսքը:

Երկրորդն այն մարդիկ են, ովքեր լսելով Ավետարանի քարոզը սիրո, արդարության, ինքնազոհության մասին, անմիջապես բորբոքվում են լուցկու նման, բայց անմիջապես հանգում: Քարքարոտ տեղում միայն մանր խոտ է աճում, այդպես էլ այս

մարդիկ հանդարտ կյանքի պայմաններում ընդունակ են կատարել ջանքեր չպահանջող մանր շատ գործեր: Նրանք դեմ չեն առաքինությանը, բարոյականությանը, սակայն կկամենային Երկնքի արքայություն մտնել առանց բարդությունների: Իսկ երբ համոզմունքների համար ստիպված տանջանքներ ու զրկանքներ են կրում, անմիջապես ուրանում են Տիրոջը: Եսասիրության քարքարոտ շերտը չի թողնում, որ Աստծո խոսքը հասնի ու արմատավորվի նրանց սրտում:

Երրորդն այն մարդիկ են, ովքեր կամենում են միաժամանակ ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային Նրանք պիտանի չեն Աստծո արքայության համար, քանի որ կամենում են ապրել ըստ Աստծո օրենքների, բայց միաժամանակ չեն ցանկանում հրաժարվել աշխարհի ունայնությունից: Ի վերջո, աշխարհիկ հոգսերի, հետաքրքրությունների և հակումների հորձանուտը կլանում է նրանց իսպառ՝ հոգու միջից արտամղելով այն ամենն, ինչ լուսավոր է, խորհրդավոր և վեհ:

Չորրորդն այն կատարյալ մարդիկ են, ում խոսքը գործից չի տարբերվում, ովքեր Աստծո խոսքը լսելով և ընդունելով՝ փորձում են ապրել աստվածահաճո կյանքով: Ճիշտ է, բոլորը միանման չեն կարողանում ավետարանական խոսքին հնազանդվել, քանզի մեկը պտղաբերում է երեսուն, մյուսը՝ վաթսուն, մյուսը՝ հարյուր, որը նշանակում է, թե մեկն ի վիճակի է կատարել մեկ երրորդն այն ամենի, ինչ իրենից պահանջում է քրիստոնեական հավատը, մյուսը՝ մոտավորապես երկու երրորդը, և միայն քչերին է հաջողվում կատարել ամեն ինչ լիարժեք և կատարելապես: Դրանք ընտրյալ անհատականություններն են:

Պահված գանձի օրինակը

Երկնքի արքայությունը նման է մի արտի մեջ պահված գանձի: Երբ մեկն այն գտնում է, կրկին ծածկում է հողի տակ և ուրախությունից գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը ու գնում այդ արտը:



Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է , որ մարդը կարող է պատահաբար գտնել երկնքի արքայությունը և պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Ճրագի օրինակը

Ապա ավելացրեց.
-Մի՞թե որևէ մարդ ճրագը ներս կբերի կաթսայի կամ անկողնու տակ դնելու համար: Աշտանակի վրա չի՞ դնի այն. որովհետև չկա ծածուկ բան, որ չհայտնվի, ոչ էլ գաղտնի բան, որ երևան չգա:

Ճրագը քրիստոնեությունն է, որը չէր կարող երկար ժամանակ ծածուկ մնալ ու գաղտնի գործել, միայն թե այդ լույսը համարձակ դուրս բերող էր պետք:

Անպետք աղը

Աղը լավ բան է, բայց եթե իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն: 35 Ո՛չ հողին է օգտակար, ո՛չ էլ կարելի է դրանից պարարտանյութ պատրաստել, այլ դուրս են թափում: Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Աղը նյութի մեջ լուծվելիս նրա էությունն ու արտաքին տեսքը չի փոխում, այլ միայն իր համն է տալիս. նույնպես և քրիստոնեությունը մարդու կամ մարդկային

հասարակության մեջ որևէ արտաքին բեկում չի առաջացնում, սակայն ազնվացնում է մարդու հոգին և դրա միջոցով փոփոխում նրա ամբողջ կյանքը: ՝՝Եթե աղը անհամանա՝՝ ասելով նա ի նկատի ուներ այն մարդկանց, ովքեր մեկ անգամ ճաշակելով Սուրբ Հոգու հետ ազնիվ հաղորդությունը, այնուհետև ընկան աններելի մեղքի մեջ և նրանք այլևս առանց Աստծո առանձնակի օգնության ընդունակ չեն ոչնչով հոգեպես նորոգվել:

Աշակերտ լինելու գինը

Մեծ թվով ժողովուրդ էր գնում Հիսուսի հետ: Հիսուսը, դառնալով նրանց, ասաց.
-Ով որ գալիս է ինձ մոտ և ինձ ավելի չի սիրում, քան իր հորն ու մորը, կնոջն ու զավակներին, եղբայրներին ու քույրերին և նույնիսկ իր անձը, չի կարող ինձ աշակերտ լինել. որովհետև ով որ իր խաչը չի վերցնում և ինձ չի հետևում, ինձ աշակերտ լինել չի կարող: Եթե ձեզնից մեկն ուզենա մի աշտարակ շինել, նախ չի՞ նստի և չի՞ հաշվի ծախսերը՝ տեսնելու համար, թե գործը վերջացնելու համար բավարար դրամ ունի՞: Այլապես, երբ հիմքը դնելուց հետո չկարողանա աշտարակն ավարտել, բոլոր տեսնողները կսկսեն ծիծաղել նրա վրա՝ ասելով. «Այս մարդն սկսեց կառուցել, բայց չկարողացավ ավարտել»: Կամ եթե մի թագավոր տասը հազար հոգուց բաղկացած բանակով ուզենա պատերազմի դուրս գալ մի ուրիշ թագավորի դեմ, որ իր վրա եկել է քսան հազար հոգուց բաղկացած բանակով, նախ չի՞ նստի և չի՞ մտածի, թե արդյոք կկարողանա՞ հաղթել նրան: Այլապես, դեռևս հեռվից նա պատգամավոր կուղարկի՝ հաշտություն խնդրելու նրանից: Այդպես էլ՝ ձեզնից նրանք, ովքեր չեն կարող հրաժարվել իրենց ամբողջ ունեցածից, ինձ աշակերտ լինել չեն կարող:

Մարդկայնի կյանքը աշտարակի կառուցման նման է, որի հիմքը մարդու սերն է: Հիսուսին հետևելու իմաստը՝ փրկությունն է, որի համար անհրաժեշտ է սիրել Աստծուն ամբողջ հոգով ու մտքով: Եվ Հիսուսին հետևելուց առաջ մարդը պետք է հաշվի նստի ինքն իր հետ և հասկանա այն գինը, որ պիտի վճարի՝ հիսուսին աշակերտ լինելու համար:

Նոր կարկատանը հին հագուստի վրա

Ոչ ոք չլվացված նոր կտորը չի գործածի հնացած հագուստի համար կարկատան անելու, քանի որ նոր կտորը, քաշվելով, հագուստը կպատռտի, և պատռվածքը ավելի մեծ կլինի:

Այստեղ մեկնաբանությունը նույնն է ինչ որ <<*Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում* >>առակում: Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած հագուստի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր կտորի: Հնի հետ դրանք համադրելը անհարիր է: Պետք է նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Մշակների առակը

Մի տանուտեր առավոտյան դուրս եկավ իր այգու համար մշակներ վարձելու : Եվ մշակների օրավարձը մեկ դահեկան սահմանելով՝նրանց ուղարկեց իր այգին:Եվ ժամը երեքին մոտ դուրս եկավ, ուրիշներին տեսավ,որ հրապարակում պարապ կանգնել էին:Նրանց էլ ասաց. <<Դուք էլ գնացեք այգին, և ինչ որ արժան է կտամ ձեզ>>: Նրանք էլ գնացին,և դարձյալ ժամը վեցին և իննին դուրս գալով՝նույն կերպ վարվեց:Եվ ժամը տասնմեկին մոտ էլ դուրս գալով՝ուրիշները գտավ պարապ կանգնած և ասաց նրանց.<<Ինչու եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել>>:Նրան ասացին<< Որովհետև ոչ ոք մեզ չվարձեց>>:
Նրանց ասաց.<<Դուք էլ գնացեք այգին, և ինչ որ արժան եք, կստանաք>>:
Եվ երբ իրիկունը եկավ, այգու տերն իր վերակացուին ասաց. <<Մշակներին կանչիր և նրանց վարձը տուր՝հետիններից մինչև առաջինը>>: Եվ ժամը տասնմեկինները գալով մի-մի դահեկան առան:Առաջիններն էլ եկան և կարծեցին,թե ավելին կառնեն,և նրանք էլ մի-մի դահեկան առանԲայց երբ առան,տանտիրոջից տրտնջում էին և ասում.<< Այդ հետինները մեկ ժամ աշխատեցին,և դրանց մեզ հավասարեցրիր>>:Նա էլ պատասխանեց նրանցից մեկին.<<Ընկե՛ր ,ես չեմ զրկում քեզ.չ՞է որ դու ինձ հետ մի դահեկանի համաձայնեցիր>>:
Քոնը առ և գնա,բայց ես ուզում եմ,որ այս հետինին տամ,ինչպես քեզ:Կամ մի՞թե ես իշխանություն չունեմ տնօրինելու իմ ունեծվածքը,կամ թե քո աչքը չար է,որ ես բարերար եմ>>:

Նախևառաջ կարևոր է նշել, որ ոչ մեկին անազնվորեն չվերաբերվեցին այստեղ: Առաջին մշակները համաձայնվեցին ողջ օրվա աշխատավարձին և ստացան այն: Բացի այդ կարող ենք պատկերացնել, թե նրանք որքան երախտապարտ էին, որ աշխատանք ստացան: Փրկչի ժամանակներում մարդն ու իր ընտանիքը չէին կարող գործել ավելի, քան ապրել նրանով, ինչ վաստակում էին տվյալ օրը: Եթե դուք չէիք աշխատել կամ հող մշակել, ձուկ որսացել կամ էլ վաճառել, դուք, հավանաբար,

ուտելիք չէիք ունենա: Քանի որ աշխատուժի առաջարկն ավելի շատ էր, քան աշխատատեղերի պահանջարկը, այդ առավոտյան առաջինն ընտրված այս տղամարդիկ ամենահաջողակն էին ողջ աշխատուժի մեջ:Իրականում, եթե որևէ կարեկցանքի արժանի մարդիկ կային, դա առաջինը նրանք էին, ովքեր չէին ընտրվել, ովքեր նույնպես կարիք ունեին բերաններ կերակրելու և հագուստներ ապահովելու: Բախտը կարծես երբեք չէր ժպտում նրանցից մի քանիսին: Տանուտերի յուրաքանչյուր այցի ժամանակ նրանք միշտ տեսնում էին, թե ինչպես մեկ ուրիշն էր ընտրվում: Բայց հենց օրվա ավարտին մոտ, տանուտերը վերադարձավ զարմանալիորեն հինգերորդ անգամ տասնմեկերորդ ժամի նշանավոր առաջարկով: Մշակներից այս վերջինները և ամենահուսահատվածները լսելով միայն, որ իրենց հետ ազնվորեն կվարվեն, ընդունեցին աշխատանքն առանց նույնիսկ իմանալու աշխատավարձը, իմանալով, որ ինչ-որ բանը ավելի լավ է, քան ոչ մի բանը, որն այն էր, ինչ նրանք մինչև այդ ունեցել էին: Հետո, երբ նրանք հավաքվեցին իրենց վճարը ստանալու, նրանք ապշահար եղան՝ ստանալով նույնը, ինչպես բոլոր մյուսները: Նրանք պետք է որ մեծ ակնածանքով լցվեին և անչափ շատ երախտապարտ լինեին: Իհարկե, երբեք այդպիսի կարեկցանք ցույց չէր տրվել բոլոր իրենց աշխատած օրերում:Պատմության այս ընթացքում է, որ առաջին մշակների տրտնջալը պետք է հասկացվի: Ինչպես առակի տանուտերն ասաց նրանց . «Ընկերներ, ես անազնիվ չեմ եղել ձեր հանդեպ: Դուք համաձայնվեցիք օրավարձին, դա լավ աշխատավարձ էր: Դուք երջանիկ էիք աշխատանք ստանալու համար, և ես էլ շատ գոհ եմ ձեր ծառայությունից: Դուք լիովին վճարվել եք: Վերցրեք վճարը և վայելեք օրհնությունը: Ինչ վերաբերում է մյուսներին, անկասկած, ես կարող եմ իմ փողի հետ վարվել ինչպես կկամենամ»։ Ապա այս սուր հարցը ուղղված նրանց բոլոր ժամանակներում, ովքեր կարիք ունի լսելու այն. «Ինչո՞ւ պետք է դուք նախանձեք, որովհետև ես նախընտրում եմ բարի լինել»:

Եզրակացություն

Շատ հեշտ է աշակերտների մեջ սերմանել բարոյական արժեքներ Աստվածաշնչյան առակների միջոցով,քանզի այնտեղ ամեն մի առակ մի նոր բան է սովորեցնում,ամեն առակ մի յուրովի բարոյախրատական իմաստ ունի իր մեջ:Հատկապես կրտսեր դպրոցականները շատ մեծ հետաքրքրությամբ են կարդում Աստվածաշնչյան առակները ,պատմում ,քննարկում և վերլուծում,քանի որ դրանք և հեշտ ընթերցվող են և հակիճ են:Բայց ուսուցիչը անպայման պետք է ուղղորդի այդ ուսուցման ընթացքը և տա ճիշտ մեկնաբանությունը,որպեսզի սովորողը իմանա առակի ճիշտ մեկնաբանությունը:

Գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարքը խարխլված է, իսկ արժեքները խեղաթյուրված, շատ շրջանավարտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն վարքի բարոյական մոտիվների իսկական արժեքի մասին, չեն գիտակցում դրանց դերը իրենց ուղին ընտրելիս, մեծամասամբ նյութապաշտ են:Այդ իսկ պատճառով ավագ դպրոցականները ևս շատ բան կարող են սովորել Աստվածաշնրյան առակներից,քանի որ դրանք նաև բացում են քրիստոնեության բովանդակությունը: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակություն:

Այսպիսով ,արդյունքում սովորողը կսովորի կարդալ Աստվածաշնչյան առակները,լինել բարոյական արժեհամակարգի կրող:

Օգտագործված գրականության ցանկ

Աստվածաշունչ

https://www.youtube.com/watch?v=HtVWiqSxyOY&t=58s

https://www.youtube.com/watch?v=UNqPYKC4III&t=1s

https://www.youtube.com/watch?v=tilBGfPmULY&t=109s

https://www.youtube.com/watch?v=J-I_DhZwiec

http://ter-hambardzum.net/arakner-proverbs/